ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Մ Ա Ն N 351-Ա

«22»«06» 2017 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 315-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2010 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կատարվող ծախսերի մասին» N 315-Ա հրամանի հավելվածի 7-րդ կետի «բ» և «գ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

| | | |
|---|---|---|
| *բ/* | ***թատերականացված տոնի, հոբելյանական երեկոյի, փառատոնի, մրցույթի, ստուգատեսի, միջոցառման իրականացման՝*** | |
| | - ծրագրի /նախագիծ, սցենար/ հեղինակ, պրոդյուսեր | ամսական՝ մինչև 400.0 հազ. դրամ |
| | - համակարգող /ղեկավար/ | ամսական՝ մինչև 200.0 հազ. դրամ |
| | -գործավար, քարտուղար | ամսական՝ մինչև 100.0 հազ. դրամ |
| | - կազմակերպիչ, ժյուրիի անդամ | ամսական՝ մինչև 110.0 հազ. դրամ |
| | - ռեժիսոր | ամսական՝ մինչև 200.0 հազ. դրամ<br>մեկ միջոցառման գովազդային |

| | | |
|---|---|---|
| | - նկարիչ /դիզայներ/<br><br>- լուսանկարիչ<br>- սպասարկող անձնակազմ | նյութերի դիզայն՝ ամսական մինչև 270.0 հազ. դրամ<br>օրը՝ մինչև 40.0 հազ. դրամ<br>մեկ անձի համար օրը՝ մինչև 6.6 հազ. դրամ |
| գ/ | ***ուսուցողական ծրագրերի և վարպետության դասերի անցկացման՝***<br>- ուսուցիչ, վարպետ - մասնագետ | մեկ ժամվա համար՝ մինչև 4500 դրամ |

»:

2. Սույն հրամանի դրույթները տարածվում են 2017 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ԱՄԻՐՅԱՆ

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010,011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am